ԱՐՑԱԽ... ՊԵՏՈՒԹՅՈՒՆ... ԱԶԳ...

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՈԳԵԲԱՆ ԼԵՎՈՆ ԶՈՒՆԱԶՅԱՆԻ ՀԵՏ

— Նախ կցանկանայի ճշտել մեր զրույցի բնույթը, որոշակիացնել երա շրջանակները: Երևի թե ճիշտ կլինի սկսել 1988 թ. փետրվարից, որ փաստորեն մեր ազգային ինքնագիտակցության բոլորվին նոր, անգամ շատերիս համար անպատկերացնելի մակարդակ նշանավորեց, և այնուհետև անդրադառնալ ճաքող ալեհավաքց, թե այնուհետև անդրադառնալ ճաքող ալեհավաքց, մի քանի մեկ և կես տարվա իրադարձություններին: Ամենի քան մեկ և կես տարվա իրադարձություններին: Ամենի ճառաջին ճերքին ինձ ճետաքրքրում են այդ ամենի սոցիալ-ճոգեբանական ակունքները ու պատճառները. այսինքն, թե արդյո՞ք դա, իր բոլոր շափումներով՝ տարածական, ժամանակային, քանակական, պատմական և բնական, պատճառական, թե օրինաչափ երևույթ էր:

— Ոչ մի առումով ես (դա են ապացուցում նաև այդ ընթացքում կատարված բազմաթիվ հետազոտություններ՝ արդյունքները) պատահականություն չեմ տեսնում: Պատահական չէր, որ շարժումը ծագեց հենց փետրվարին, պատահական չէր, որ ունեցավ վարչէջի, վերելքի շրջաններ, պատահական չէր, որ ուներ մասնակիցների հենց այդ քանակը և այլն: Այնպես որ, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-պատմական, սոցիալ-մշակութային և հնարավոր մյուս առումներով գտնում եմ, որ հատկապես 88 թվին, հատկապես քաղաքականության փոփոխությունները, բռնատիրության փոքր-ինչ թուլացումը նպաստեցին փետրվարին այդ շարժման բռնկմանը: Ինչո՞ւ, հատկապես Հայաստանում:

Նախ վերցնենք ազգի պատմական հիշողությունը: Էթնոհոգեբանության մեջ կա, այսպես կոչված, արմատական պարադիգմ հասկացությունը: Դա ազգի հոգեբանության այն բնորոշ մշակութային, հոգեբանական, էթնոգրաֆիական բովանդակություններից է, որը երա մոտ որպես որոշակի պատմահոգեբանական դիմադրանա կարող է դրսևորվել համապատասխան իրադրության մեջ: Օրինակ՝ կոտորածը որպես ամբողջական մի պատկեր, որպես համապատասխան հուշ, զգացմունք՝ մեզ հայերիս համար ունի ակնհայտ պատմական հիշողության տարր: Դա դրսևորվեց Սումգայիթի դեպքերի ժամանակ: Մեր պեղումները, որ դա կոտորած է, ցնցապայթյուն՝ ունեին նաև որոշակի հոգեբանական հիմք: Այդ առումով պատմական անարդարության արմատական պարադիգմն, ասենք, եղել է ու կմնա, քանի դեռ հարցերը՝ տարածքային, սոցիալական, համապատասխան լուծումներ չեն ստացել: Նվազագույն իսկ հարարավորության առկայությունը բացահայտց դրանք: Ես կրկնում եմ նվազագույն իսկ, որովհետև այդ ժամանակ վերակառուցում կոչվածը դեռ չէր ստացել իր կոնկրետ ձևը: Առայժմ մեզ ավել էին որոշակի սահմաններ և ասել էին. այս սահմանների մեջ գոռացեք, պահանջեք, նույնիսկ մեզ հուշում էին, թե ինչպես պետք էր պահանջել, ինչպես պետք էր քննադատել:

— Գուցե անդրադառնանք մասնակիցների՞ն, երանց գիրհարոշման բնույթագծերը...

— Ես փորձել եմ վերլուծել միտինգների մասնակիցների տիպաբանությունը:

Նրանք հստակ զանազանվում էին ըստ իրենց գրաված տեղի: Օրինակ՝ հարթակի մոտ, 5—6 մետր շրջագծով հիմնականում ակտիվիստների խումբն էր, որը տոն էր տալիս. Նրանց ձայնը լսվում էր միկրոֆոններում, գերակշռում էր հետևում կանգնածներին: Հետևում կանգնածների մեջ կային փոքրիկ ամփոփ խմբեր, հիմնականում ընկերախմբեր, որոնք իրենց ակտիվությամբ չէին զիջում ակտիվիստներին և հետևում էին, որովհետև առջևում արդեն պարզապես տեղ չկար: Հիմնականում մարդն իր ակտիվությամբ էր որոշում իր դիրքը: Եթե ուշադիր նայենք, հատկապես Թատերական հրապարակում, մասնակիցների մեծագույն մասը, նույնիսկ դեռ 1988-ի նոյեմբերին, մինչև նոյեմբերի 24-ը գրավում էր համեմատաբար միջին և հեռավոր դիրք: Եթե դիրքը ավելի խորը քննենք դրդապատճառների տեսակետից և «ներքին ստրուկ» հասկացության օգնությամբ դիմենք, կարելի է տիպաբանական հետևյալ եզրահանգումներն անել: Առաջին շարքում մարդիկ են, որոնք իրենց մեջ քիչ թե շատ հաղթահարել են վախի բարդույթը: Միջին շրջանում հիմնականում տատանվողներն էին: Երրորդ շրջանում մարդիկ էին, որոնք գերադասում են որոշակի տարածություն պահպանել: Դա նույնիսկ ֆիզիկական նշանակություն ունի: Օրինակ, ես նկատել եմ, որ հատկապես սկզբնական շրջանում մարդիկ հեռվում էին կանգնում, որովհետև այնտեղից փախչելու հնարավորությունը մեծ էր: Առանցքային հասկացությունը այստեղ ըստ ակտիվության զանազանումների, վախի բարդույթի հաղթահարման չափն է, այն վախի բարդույթի, որը մտնում է Homo Sovieticus-ի բուն պատմահոգեբանական էության մեջ. երբ ստիպված ես մտածել մի բան, խոսել մեկ այլ բան և վարվել բոլորովին այլ կերպ: Այդ անընդհատականությունը շհաղթվեց հաղթահարել բոլորին և չէր կարող հաղթվել, որովհետև այդ բարդույթը արմատացած է ստալինյան բռնություններ տեսած սերնդի մոտ և շղթայաձև փոխանցվում է սերունդներին, եթե, իհարկե, չկրենք շղթան:

— Ցանկացած շարժում ունի իր գերլարվածության ժամանակաճատվածը՝ զգաբենկեսը: Դա որոշակիորեն, ինչ-որ ժամանակ նախապատրաստվում է, զարգանում, ապա և, բնականաբար, վայրէջք ապրում: Այսպիսի «պիկեր» կարելի է ճամարել 1988-ի փետրվարը, հունիսյան ճատաշրջանը, հոկտեմբերի 24-ի ճատաշրջանը և այլն: Ինչո՞վ են բնութագրվում դրանք և հոգեբանական առումով ինչ է ցույց տալիս դրանց վերլուծությունը:

— Արցախյան շարժման զարգացման ընդհանուր ընթացքը ունի մոտավորապես 5—6 պիկ: Պիկերն ընդգրկում են մեկ շաբաթից մինչև երեք շաբաթ ժամանակահատված՝ նախապիկային և հետպիկային շրջանով: Կանգերդ՝ Փետրվարի 20-ից 27-ը շարժման զարգացման առաջին պիկն էր. դա շատ հետաքրքիր էր նրանով, որ հատկապես արտացոլում էր վախի բարդույթի հաղթահարմար պրոցեսի բազմաստիճանականությունը: Երկրորդ անգամ, թերևս, ավելի հեշտ էր, որովհետև համոզված եմ, արդեն, որ այնտեղ քեզ չեն սպանի, չեն ծեծի՝ ինչպես Ջեխոսլովակիայում, Հունգարիայում և այլուր: Պիկերի պատկերը հետևյալն է. գրաֆիկի մեկ հարթության վրա՝ պետության հակազդումներն են, մյուսին՝ ժողովրդական պահանջները՝ իրենց տարբեր դրսևորումներով. միտինգ, ցույց, հացադուլ, ավտոցույց, գործադուլ և այլն:

Երբ համեմատում ես այս երկուսը տրամաբանական համապատասխանության տեսակետից, ապա ստանում ես բացարձակ անհնթնթություն: Ամենապատասխանատու ժամանակներում, ասենք, փետրվարի 26—25-ին, լսում ես ասենք Դեմիրճյանի ելույթը Թատերական հրապարակում, երկրաշարժից հետո՝ հայտնի ելույթներն ու հրապարակումները, որոնք ինքնին մղում են պայքարի նոր ձևերի: Ուշադրություն դարձրեք, թե ինչ զարգացում ապրեցին պայքարի ձևերը: Սկսեցինք ժողովների, որոշումներից, այսինքն՝ ամենախորհրդային ձևի և հասնենք գործադուլի՝ ամենահակախորհրդային ձևի: Այն, ինչ պետությունն արեց արցախյան շարժման, այդքան մեծ զանգվածներ ակամա ոտքի հանելու համար, կարելի է ասել, չի արել նույնիսկ «Ղարաբաղ» կոմիտեն:

— Դու խոսեցիր պետական հակազդեցությունից. գուցե մանրամասնեմ այդ ճարցը, մանավանդ ես գիտեմ, որ դու մի շարք ուշագրավ ուսումնասիրություններ ունես, որոնք ընդգրկում են բազմաթիվ ուղղություններ. մասնավոր և պետության հակազդումներ, արցախյան վերլուծություն, երկայնական ճարցումներ, արցախյան շարժման պատճառների պետական ըմբռնման բնույթ, լուրերի, ասեկոսեների և նույնիսկ անեկդոտների վերլուծություն և այլն: Գուցե, շարունակելով բեմաները՝ սկսեմ արցախյան շարժման պետական-կառավարական ըմբռնումի՞ց...

— Ես վերլուծել եմ արցախյան խնդրին վերաբերող բոլոր կառավարական-կուսակցական որոշումներն ու փաստաթղթերը, համադրելով այն դեպքերի ժամանակագրական հերթականության հետ: Ցզրակացությունները բնավ փաղաքշական չեն, հատկապես վերակառուցում հոչակած պետության համար: Մի քանի խոսքով ստացվում է հետևյալ պատկերը. սկսած 1988-ի փետրվարի 24-ին հրապարակված ԵՄԿԿ կենտկոմի որոշումից մինչև քաղբյուրոյի հանձնաժողովի մայիսի 19-ի (1989 թ.) որոշումը (ի դեպ, ես կկենտրոնանամ հատկապես կենտրոնական զեկավարության դիրքորոշման վրա, քանի որ հանրապետական կառավարությունը հիմնականում ընդօրինակում է ընդունված կենտրոնական պաշտոնական գիծը). դավանվում է արցախյան շարժման պատճառների հետևյալ տեսությունը. Արցախում ահա են մի շարք լուծված պրոբլեմներ, դրանք տնտեսական, գաղափարական, կադրային բնույթի են, բայց ոչ բնավ ազգային-քաղաքական:

Սրա մասին խոսելն իսկ անթույլատրելի է, որքան էլ բղավի եղբայր-արցախցին: Այս առումով շափազանց ուշագրավ է անցյալ տարվա փետրվարի 24-ի փաստաթուղթը, որտեղ ոչ հեռու անցյալի «լավագույն ավանդույթների» համաձայն, խոսվում է բացառապես սոցիալ-տնտեսական և մշակութային հարցերի մասին ու այն էլ ոչ թե լուծման, այլ «հետագա զարգացման» տեսանկյունից: Վերը թվարկված հարցերը պաշտոնական ըմբռնման, եթե կարելի է այսպես ասել, ռացիոնալ հիմքն են կամ այն, ինչի համար մեզ բարեհաճորեն թույլատրում են բողոքել: Հետևաբար, տալիս են 400 մշն և մշակութային խոստումներ: Բայց կրքերը չեն հանդարտվում: Ինչո՞ւմն է բանը, թվ այստեղ սկսվում է պաշտոնական տեսակետի մեծն ոգիսակները: Պրոբլեմները, իհարկե, կան, բայց դրանք բավական չեն «հուզերիս» (մենք այս բառին դեռ կվերադառնանք) այսօրինակ բորբոքման համար: Զէ՞ որ նույնպիսի խնդիրներ կան նաև երկրի այլ շրջաններում: Ուստի, տրամաբանում է պաշտոնական միտքը, արցախյան շարժման այդօրինակ հզորության պատճառը սուբյեկտիվ մոլորություններն են, որոնք ինչ-որ տեղ-նիստում են օբյեկտիվ հիմքից, բայց իրենց ինտենսիվությամբ բնավ չեն համապատասխանում ու չեն բխում նրանից: Սա է պատճառը, որ մեզ այդպես հանախ իմաստների կեղծվածքով կոչել ու կոչում են մի կողմ դնել հույզերն ու առաջնորդվել բանականությամբ: Այստեղից էլ ծագում է հաջորդ հարցադրումը. իսկ որո՞նք են այդ սուբյեկտիվ մոլորությունների պատճառները: Եվ հետևում է տասնամյակներ շարունակ ստալինյան «դատարաններում» հղկված պատասխանը, իհարկե, նոր խմբագրմամբ՝ «վերակառուցման թշնամիներ», որոնց դերում հանդես եկան «Ղարաբաղ» և «Կոմունիստ» կոմիտեները: Պահպանվեց նույնիսկ փաստարկավորումը հանձին «ստարերկրյա հովանավորողների, որոնք ցանկանում են խարխլել խորհրդային ժողովուրդների բարեկամությունը»: Արդիականացման նպատակով ավելացվեցին «սեփական շահավետ դիրքերի պահպանման և «էրեկառուցմանը խոչընդոտելու» պատճառները: Արդյունքում ընտացվեց կուռ և բավականին հետեղական (առայժմ մի կողմ թողնենք բարոյականությունն և ճշմարտության նրկատառումները, քանզի այս դեպքում դրանք կիրառելի չեն) մի տեսություն, որը «բացատրեց» թե՛ արցախյան շարժման պատճառները (ապականված տարրեր, վերակառուցման թշնամիներ), թե՛ նպատակները (մաֆիայի շահավետ դիրքերի պահպանում վերակառուցման ամենարժիր ալիքից), թե՛ միջոցները (ձեղում պետական իշխանությունների վրա) և թե՛ պետական հնարավոր գործողությունների ծրագիրը (տնտեսական միջոցառումներ, ռասիկանա-իրավական վերահսկողություն և ձեղում): Այս տրամաբանական շղթայի հետեղական զարգացումն էլ բերեց հետագա պատժամեղողական գործողություններին:

— Ուզում ես ասել, որ պարեստային ժամը, հատուկ դրությունը, «Ղարաքաղ» և «Կոմունիստ» կոմիտեների ձերբակալությունը նախապատրաստվել և առդեն իսկ ենթադրվում էին արցախյան շարժման պաշտոնական մեխեմբաանության ընթացքո՞վ:

— Կոմիտեների և ակտիվիստների ձերբակալությունը կարելի էր կանխատեսել դեռ անցյալ տարվա մարտապրիլին: Ինչ վերաբերում է պարեստային ժամին և հատուկ դրությանը, ես չէի կարծում, որ պաշտոնական կարմատեսությունը, օրվա, պահի շահին գերի լինելը կարող է ինքնահակասության մեջ մտնել իր կողմից իսկ հուշված քաղաքականության հետ: Այսինքն՝ օբյեկտիվորեն կանխատեսում էի նաև դա, բայց ինձ զարմում էի զուտ բարոյական նկատառումներից ելնելով:

— Բայց ինչո՞ւ ճիմմ ճամարել ճատկապես այդ տեսությունը և ոչ մեկ ուրիշը:

— Օրինա՞կ:

— Օրինակ, շարժման ճնշմարտացի ճերկայացումը:

— Որպեսզի ամբողջ աշխարհն իմանա, որ Խորհրդային Միությունում ահա է ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժո՞ւմ: Ամեն ինչ, միայն՝ ոչ դա: Խորհրդային գաղափարախոսները պարզապես չէին կարող դա թույլ տալ: Անհրաժեշտ էր շարժումը ներկայացնել որպես տեղային, էթնիկական, հիմնականում հուզական կոնֆլիկտ հայերի ու ադրբեջանցիների միջև: Սրա փայլուն ձևակերպումը տվեց մեր երկրի զեկավարը «Զվարթնոց» օդանավակայանում. «Ղարաբաղը տրվեք՝ «Ջենք տա»— «պարզ» հակասությամբ: Իսկ հուզական մոլորությունների և դրանք սնող «տարրերի» վարկածը լրիվ հարմար է: Այդ պատճառով է, որ այդպես ջանասիրաբար աշխատում էին և այժմ էլ ջանում են հավասարության նշան դնել երկու կողմերի միջև՝ օրինակ «Զվարթնոց»—«Սումգայիթ», «Բաքու»—«Երևան» և այլն: Դատելով ամերիկացի գործընկերներիս ամերիկյան մամուլի արցախյան հրապարակումների վերլուծությունից, սա նրանց հաջողվեց:

— Եվ դա արդեն կարելի է վերջնականապես «ապացուցվա՞ծ» ճամարել:

— Որոշակի վերապահումներով:

Փոքր-ինչ այլ պատկեր է եվրոպական մամուլում, հատկապես այն երկրների, որոնք ունեն խորհրդային ժամանակաշրջանում ազգային-ազատագրական պայքարի որոշակի նախապատմություն: Խոսքս, բացի կապիտալիստական երկրներից, նաև սոցիալիստական համակարգի երկրների մասին է:

— Կայի՞ն արդյոք այլ պատճառներ արցախյան շարժումը այդպես ըմբռնելու և ներկայացնելու համար:

— Անտարակույս, այն էլ ինչպիսի՞, Խորհրդային գաղափարախոսության համար ամենակարևոր պատճառները՝ քաղաքական:

Նախ՝ դեմս կոմիտեների «ապականված տարրերի» տարբերակը թույլ էր տալիս հող նախապատրաստել վտանգավոր մրցակիցներից ազատվելու համար, որոնք հասարակական կարծիքի միջոցով կարթես վերահսկում էին կուսակցակրավական միջխանության գործունեությունը: Ազատվել ընդմիշտ և, երկրաշարժի Թոհուբոհի մեջ, թվում էր թե՝ անեկատելիորեն:

Երկրորդ՝ պաշտոնական այդպիսի մեկնաբանությունը օգտակար էր նաև համախորհրդային հասարակական կարծիքի տեսանկյունից: Ինչպես կարելի է բաց թողնել վերակառուցման կենդանի թշնամիներ ցուցադրելու և շարժումը վարկաբեկելու այսպիսի հնարավորություն:

Երրորդ՝ արցախյան շարժման ճնշումն ու կոմիտեների ձերբակալությունը ծրագրված էր ցուցադրելու երկրի այլ անհանգիստ շրջանների բնակչությանը այն վրա՝ տանգավոր-ճակատագրական գիծը, որից հետո սկսվում է տիրող դասակարգի (այդ, այդ, պետք չէ այդպես զարմանալ) գերիշխանությունը: Այդ սահմանի մասին է, որ մեզ զգուշացնում էին՝ խոսելով դեմոկրատիայի և անարխիայի տարբերությունների և սահմանագծի մասին:

Չորրորդ՝ վերակառուցման թշնամիների և «մոլորյալ բազմության» վարկածը հնարավորություն էր տալիս նաև ինչ-որ կերպ բացատրել վերակառուցման ձախողումը Հայաստանում և բարձրացնել պաշտոնական իշխանությունների հեղինակությունը: Այլ խոսքերով, հայվարկը կառուցված էր «քավության նոխազների» դատապարտման ավանդական խորհրդային տրամաբանության վրա:

Մի խոսքով, պատճառները բազմաթիվ են և բնավ չեն սահմանափակվում թվարկվածներով: Թերևս բավարարվեմ ասելով, որ քաղաքական շահերը հակասում էին և ցայսօր հակասում են արցախյան շարժմանը: Իսկ «հիմնավոր» պատճառներ ու առիթներ միշտ կգտնվեն: Միայն հրամայիր: Այս իմաստով ես անկեղծ խորշանքով եմ գիտում կամ լսում մեր այն մտավորականներին, որոնք երեկ դեռ լռում էին, իսկ այսօր հետևելով վերին հրամանին՝ քննադատում են... բայց միայն այն, ինչի համար պաշտոնական թույլտվություն կա: Որքան կարելի է հայհոյել ադրբեջանցիներին, միթե դժվար է հայհոյանալ, որ նրանք զուտ գործիք են կայսրության ձեռքին: Այն կայսրության, որն ամեն ինչ կանի, որպեսզի պահպանի իր ստատուս քվոն:

— Ընդունելով այդ տրամաբանությունն ու առաջնորդվելով դրանով, փաստորեն, բախվում ենք պատի՝ նպատակը դառնում է անհույս, նվիրումն ու ձգտումը՝ խաթկեմ, պայքարն անիմաստ և զուր...

— Իհարկե, ոչ: Ոչ, թեկուզ այն պատճառով, որ մեզ հետ վերակառուցում-դեմոկրատիա են խաղում, մենք էլ պետք է խաղանք մինչև վերջ: Սակայն խաղանք խելոք, առանց ավելորդ աղմուկի և, կրկնում եմ, մինչև վերջ:

— Խաղո՞ւմ:

— Իհարկե... Բոլորս տեսանք վերջին համագումարը: Մի՞թե հասկանալի չէ, որ «ագրեսիվ-հնազանդ» մեծամասնությունը միայն մեծամասնություն չէ, այլ տիրող կուսակցա-ոստիկանական համակարգի կույր գործիքը, նրա հլու կամակատարը, որին նա կարող է շարժման և գործողության մեջ դնել ցանկացած պահի:

— Վերադառնանք արցախյան շարժմանը: Ինչպե՞ս ես տեսնում նրա ելեկան:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ... ԱԶԳ...

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՈԳԵԲԱՆ ԼԵՎՈՆ ԶՈՒՆԱԶՅԱՆԻ ՀԵՏ

— Համենայն դեպս ոչ այնքան վարդագույն, որքան դուք, լրագրողներդ, ցանկանում եք ներկայացնել ժողովրդին: Շարժման պաշտոնական ընդունում կա, բայց լկան երաշխիքներ, որ ամեն ինչ նորից չի կրկնվի: Բուսացքը ընդամենը քուլացել է, սակայն չի վերացել: Իսկ եթե չի վերացել, ուրեմն կարող է ցանկացած պահին սեղմվել: Հետաքրքիր բան է ստացվում. նստաշրջաններ ենք գումարում, բացաշունչ ելույթներ ունենում... պարբերային ժամի և հատուկ դրության պայմաններում: Կոմիտեին ազատում են, բայց ոչ թե գործված սխալի ընդունման պատճառով, այլ խեղդանքով և համոզված պնդում, որ նրանք կգնահատեն այդ «բարեհոգությունը»: Հիշեք ՊԱԿ-ի նախագահի հայտարարությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդում: Երաշխիքներ են պետք, երաշխիքներ:

— Աճպայման, սակայն տվյալ դեպքում՝ ինչպիսի՞ս...

— Կուսակցական հեգեմոնիայի և թելադրանքի վերացում, սոցիալ-քաղաքական համակարգի արմատական վերակառուցում և ոչ թե զգուշավոր բարեփոխում, դեկրետ «իշխանության մասին», ՊԱԿ-ի և ՆԳՄ-ի գործունեության լրիվ ժողովրդական վերահսկողություն... Սրանք դեռ ամենահիմնականներն են, ամենագլխավորները... Ինչ վերաբերում է արցախյան շարժման ժողովրդական տեսանկյուններին, ապա, կարծում եմ, նշանակալիորեն մեծացել է վերահաս ճգնաժամի վտանգը: Բանն այն է, որ շարժման պաշտոնական ընդունումը մեծացնում է նրա նպատակների պանսպեղեղանացման և զանազան անմաթուր, արդեն իսկապես «տարերի» ծրագրված և չծրագրված մուտքը բուն շարժման կենտրոնը: Հակադրության մեջ հեշտ է մաքուր մնալ, երբ կան կոնկրետ թշնամիներ: Ավելի դժվար է, երբ թշնամիդ ծպտված է կամ էլ ժամանակավորապես ժողովրդավարություն է խաղում: Այստեղ արդեն հայտնի դիվանագիտություն և բարոյական մաքրություն է պահանջվում: Բացի դրանից, շարժման պաշտոնական ընդունումը մեծացնում է նաև նրա բյուրոկրատացման վտանգը: Այս առումով ինձ թվում է նպատակահարմար է շարժման զեկավարության՝ կոմիտեի խնամքով ու բծախնդիր ոտացիան: Բոլորս էլ մարդիկ ենք և տառապում ենք միևնույն հոգեբանական ունայնությամբ:

— Ուրեմն ճասկացա, դու բացառում ես պետության կողմից իրական ժողովրդավարության և շարժմանը միանալու հնարավորությունը:

— Բացառում եմ, բայց ելնելով ոչ թե անձնային (ինչ տարբերություն սա կամ նա), այլ սոցիալ-քաղաքական համակարգային նկատառումներից: Այսինքն՝ իր ներկա տեսքով սոցիալ-քաղաքական տոտալիտար համակարգը, ելնելով իր քաղաքական շահերից, գատարկված է հակասության մեջ մտնել արցախյան, ինչպես նաև բոլոր այլ իսկապես ժողովրդական շարժումների հետ: Կրկնում եմ. արմատական վիրահատություն է պետք: Իսկ քանի դեռ այն չկա, ներկա սոցիալ-քաղաքական համակարգի պայմաններում գործող անձը ենթակա է դառնալ նրա շահերի ակամա գերին: Իսկ այդ շահերը, որպես կանոն, չեն համատեղվում ժողովրդական շահերի հետ: Սա հասկանալու համար բավական է վերլուծել արցախյան շարժմանը տրված պետական հակազդումները:

— Խոսակցության սկզբում դու ճպանցիկ շոշափեցիր այդ խնդիրը: Ի՞նչ կոնկրետ եզրակացություններ կան:

— Եզրակացությունը հիմնականում մեկն է. արցախյան շարժման ընթացքում դրսևորված պետական հակազդումները կրկնում են «վարկաբեկում-ճնշում» հայտնի ստալինյան երկյակը: Վարկաբեկումը տարվում էր երկու հիմնական ուղղություններով. անհատական և խմբային: Եթե առաջին դեպքում մեր առջև հառնում է «կարիերիստի, նեղ ազգայնամոլի և սադրիչի» բազմերանգ կերպարը, ապա երկրորդ դեպքում տեսնում ենք «մոլորյալների մի հոծ բազմություն, որը տարվելով սադրիչների կոչերով, դիմում է անպատասխանատու գործողություններիս: Ճնշման հակազդումը հիմնականում հետևում, իսկ որոշ դեպքերում նաև նախորդում էր վարկաբեկմանը (հիշենք «Զվարթնոցը»): Երբ այն հետևում էր վարկաբեկմանը, ապա ի հայտ էր գալիս շատ ավելի մեծ ուժգնությամբ, ակնհայտորեն վատահասարակական կարծիքի արդեն ծրագրավորված գնահատականների վրա:

Հետաքրքիր են այս հակազդումներին տրված ժողովրդական հակազդումները: Վարկաբեկումը վերջին հաշվով բերեց ցուցարարների միաձուլության և վճռականության էլ ավելի ամրապնդմանը: Վարկաբեկման առաջին իսկ փորձից հետո հայտնվեցին. «Մենք ծայրահեղականներ չենք, ժողովուրդ ենք», «Բոլոր հայտարարենք մասսայական ինֆորմացիայի միջոցներին», «Ղրավոյա», ո՞ւր է քո ճշմարտությունը» ցանկալի կարգախոսները և բոլորը ոտաներեով: Ընդհանրապես, կարծում եմ, որ թե՛ վարկաբեկումը, և թե՛ ճնշումը արցախյան շարժմանը տվեցին այն, ինչ չէին կարող անել տասնյակ, այսպես կոչված, անպատասխանատու անձինք, քանզի ստեղծելով արտաքին օտար սպառնալիք, դրանք նպաստեցին միասնական ազգային ճակատի կազմավորմանը:

Ճնշման հակազդման սոցիալ-հոգեբանական հետևանքները ավելի լուրջ էին: Իբրև բավական է ասել, որ դեռևս մարտին (1988 թ.) հարցվածների ավելի քան 49,0 տոկոսը համարում էր, որ եթե միտինգները շարունակվեն, կառավարությունը ավելի շուտ կփորձի ուժով ճնշել կամ սարսափեցնել, քան հանանալ և բավարարել ժողովրդի պահանջները: Բռնությունը բռնություն է ծնում: Եվ սրանից հետո դեռ զարմանում են, թե՝ ինչո՞ւ նստացույց, ինչո՞ւ հացադուլ և ինչո՞ւ գործադուլ:

Գրոպագանդայի սոցիալական հոգեբանության մեջ օգտագործվում է «բումերանգի էֆեկտ» հասկացությունը, երբ պրոպագանդիստական որոշակի ազդեցությունը առաջացնում է ապատվածին հակառակ հակազդումը. Վախենում եմ նույնիսկ մտածել, որ արցախյան իրադարձությունների ընթացքում այս էֆեկտը գիտակցորեն էր օգտագործվում: Բայց, համենայն դեպս, տարակուսելու առիթ երևի ունենք: Գոնե այն պատճառով, որ հարցվողների ավելի քան 50 տոկոսը մասնակի և հեռատատեսության դերը արցախյան դեպքերի ընթացքում գնահատում է որպես «ներսից ղեկավարվողների և միտինգների կանխամտածված հարուցում»: Բայց նույնիսկ եթե այդպես է, այսինքն՝ ամեն-ինչ ընթանում էր համաձայն նախապես մշակված ինչ-որ վերին ուցեարի, ապա դժվարանում եմ հասկանալ նրա հեղինակի տրամաբանությունը: Դուցե պատմությունը ցույց տա:

Կա, իհարկե, մեկ այլ մեկնաբանություն. կառավարչական համակարգը, հասկանալի պատմական պատճառներով, իր պահպանողական դիմանացում չուներ նոր սոցիալական փորձի լուրացման համապատասխան միջոց-հակազդում: Որտեղի՞ց ունենար, երբ վանդակում պտտվող սկյուռիկի նման դեռ դեգերում ենք ստալինյան գերկենտրոնացված համակարգի շրջանակներում: Հավանաբար հենց այս անգորությունն էր, անօգնականությունը, որ առաջացնելով տագնապալից պաշտպանական դիրքորոշում, ինքնաբերաբար ստիպեց դիմել արդեն ստուգված և ամրապնդված պետական գործելակերպին: Մինչդեռ պարզապես պետք էր հասկանալ մի տարրական, պարզագույն ճշմարտություն. եթե «վերակառուցումն» ասվածը պարզապես պրոպագանդիստական խաղ չէ և իսկապես ենթադրում է դեմոկրատական վերափոխում, ապա պետք չէ խմբագրել «սահմանները», անհրաժեշտ է խպառ վերացնել դրանք: Մասնակի դեմոկրատիա չի լինում, այն կամ լինում է կամ էլ չի լինում: Իսկ սահմանները, պարոնայք, որոշում է ԺՈՂՈՎՈՒՐԴԸ՝ սոցիալական ինքնակառավարման իր բնական բնազդով, ազատ գործունեության գործընթացում:

— Սակայն դու փաստորեն բացառում ես պետական-կառավարչական համապատասխան՝ ադեկվատ գործողությունները, որոնք եղել են...

— Ընդամենը երեք օրինակ եմ հիշում, որ պետության հակազդումները համապատասխանում էին իրադարձությունների զարգացման ներքին տրամաբանությանը: Առաջին օրինակը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումն էր հունիսի 15-ին: Երկրորդը՝ Ս. Հարությունյանի ելույթն էր կուսակցիաների ժամանակ: Երրորդը՝ վերջին համագումարում, որոնք ունեցան համապատասխան հոգեբանական նշանակություն: Բայց ուշագրավ է այն հանգամանքը, որ նույնիսկ պետական ադեկվատ գործողությունները ժողովրդի կողմից ընկալվում էին նախ և առաջ որպես հաղթանակ:

— Անդրադառնալով քո նախորդ պատասխանին, ուզում եմ ամեն դեպքում հիշեցնել, որ շարժե շանսնելու տալ իրականությունը՝ այն է, որ նույն այդ դեմոկրատիայի, հրապարակայնության սահմանները զգալիորեն ընդարձակվել են՝ վկա վերջին նստաշրջանները...

— Ընդունում եմ, բայց ինչի՞ հաշվին: Երևույթը անվանելով, պետք է պատճառներն էլ նշել: Իսկ պատճառը մի խումբ հիրավի ժողովրդի կողմից ընտրված երեսփոխաններն են: Ո՞ւմ տեսանելի չէր ընթացող մենամարտը և շահերի պայքարը: Պատահական չէ, որ ինչպես անցյալ տարի, այս նստաշրջանների էլ ժողովրդի կողմից գնահատվեցին որպես «հաղթանակ»: Իսկ հաղթում են... հայտնի է թե ում: Մինչև ե՞րբ կարելի է ճանչալով շարժել ժանգոտած պետական մեքենայի անիվները: Պետք է փոխել մեքենան, սա է երաշխիքը:

— Դու փյոտո՞ւմ ես Ստալինի և ստալինիզմի դերը պետական մեքենան անդյուրաշարժ, պանպանողական և ռեպրեսիվ դարձնելու գործում...

— Ոչ միանգամայն: Սակայն խորհրդային պրոպագանդան փորձում է ներկայացնել, որ միայն Ստալինն էր տի իր միջավայրը, որ նրանք ձնախեղեցին սոցիալիստական սիստեմը: Ոչ, դա պատահականություն չէր: Դրանում ոչ Ստալինն էր մեղավոր, ոչ Բերիան, ոչ Վիշինսկին: Համակարգն էր ծնել Ստալինին: Եվ եթե այդ համակարգը, պետական կառուցվածքը չվերափոխվի, ապա նոր ստալիններ կծնվեն: Այն ժամանակ ժողովուրդը ոչ թե վախենում էր, այլ հավատում ու սիրում էր Ստալինին, նրան նվիրված բանաստեղծությունները ուսումնասիրելով, կարելի է եզրակացնել, որ դա պարզապես հեթանոսական կրոն էր: Փաստորեն քրիստոնեական տաճարները կործանեցին և դրա փոխարեն բարձրացվեցին հեթանոսական տաճարներ, նրա գաղափարախոսությունը: Եթե նայենք կրոնաբարոյական տեսակետից՝ քրիստոնեությունը հենքանոսության համեմատությամբ անհամեմատ բարձր մակարդակի վրա գտնվող կրոն է և այն էլ այնպիսի հեթանոսական կրոնի նկատմամբ, ինչպիսին ստալինիզմն էր: Այս իմաստով հասարակությունը նահանջ ապրեց: Նահանջ հոգեբանական, բարոյական, կրոնական: Քանի որ ես այս մասին գրել եմ մեկ այլ հրապարակման մեջ, ապա թերևս բավարարվեմ ասելով, որ քրիստոնեական «մի սպանիր» սկզբունքի փոխարեն, սա հանկանգ «սպանիր ժողովրդի թշնամուս» սկզբունքը... Ինչ է նշանակում սնփական հայր, երբ կա հեթանոսական հայր: Իսկ հանուն հեթանոսական հոր ամեն ինչ կարելի է անել, կարելի է սպանել, կարելի է մատնել, նա է պատասխան տալիս բոլոր մեղքերի համար: Բացի դրանից նրա գոյությունը հոգեբանական առավելություններ է տալիս ինձ՝ ինձ անվտանգ եմ զգում բարոյական բոլոր տարակուսանքներից և ձգտումներից, ես ինձ ազատ եմ զգում բարոյական ընտրություններ կատարելիս, ես չեմ կրում ազատության և պատասխանատվության ծանր բեռը:

— Կրկին վերադառնանք մեր բուն խնդրին: Ինչպե՞ս եք տեսնում շարժման ապագան:

— Դժվար հարց է, բայց փորձեմ պատասխանել:

Սկզբից վերցնենք լավագույն տարբերակը: Կարծում եմ Հայոց համազգային շարժումը կվերածի լավ կազմակերպված, ժողովրդական և դինամիկ օպոզիցիայի: Իսկ օպոզիցիայի առկայության դեպքում, որն ի դեպ երևի թե կունենա հավասարի բոլոր իրավունքները կոմունիստական կուսակցության կողքին, վերջ կդրվի գոյություն ունեցող մենատիր իշխանությանը: Հավասարի իրավունքներ ասելով ես նկատի ունեմ, օրինակ, նույնպիսի իրավասություն զանազանային տեղեկատվական միջոցների և օրենսդրական մարմինների ելույթներում, քննարկում և բնորոշվում երեսփոխանական առաջին իսկ փորձից հետո հայտնվեցին. «Մենք ծայրահեղականներ չենք, ժողովուրդ ենք», «Բոլոր հայտարարենք մասսայական ինֆորմացիայի միջոցներին», «Ղրավոյա», ո՞ւր է քո ճշմարտությունը» ցանկալի կարգախոսները և բոլորը ոտաներեով: Ընդհանրապես, կարծում եմ, որ թե՛ վարկաբեկումը, և թե՛ ճնշումը արցախյան շարժմանը տվեցին այն, ինչ չէին կարող անել տասնյակ, այսպես կոչված, անպատասխանատու անձինք, քանզի ստեղծելով արտաքին օտար սպառնալիք, դրանք նպաստեցին միասնական ազգային ճակատի կազմավորմանը:

Ճնշման հակազդման սոցիալ-հոգեբանական հետևանքները ավելի լուրջ էին: Իբրև բավական է ասել, որ դեռևս մարտին (1988 թ.) հարցվածների ավելի քան 49,0 տոկոսը համարում էր, որ եթե միտինգները շարունակվեն, կառավարությունը ավելի շուտ կփորձի ուժով ճնշել կամ սարսափեցնել, քան հանանալ և բավարարել ժողովրդի պահանջները: Բռնությունը բռնություն է ծնում: Եվ սրանից հետո դեռ զարմանում են, թ